

Լեռան տանձ

հեղինակ՝ Հակոբ Մնձուրի

Այս ամենը՝ տղաքը մինչև Գինջնա, լեռան տանձ պիտի ուտենք ըսելով,
տանողը Ղնճին Գաբոն եղավ:

Տղաքը, ամեն օրվան պես, ցերեկվան ճաշերնին գացին կերան ու եկան: Կալերը
պարպվեր էին. կոթինքը, տեղտեղ մնացած հողերը, ավազը անգամ ավլեր, տարեր
էին, մեջը ցորեն կըլլա, հավերը կպճոքեին, կուտեին ըսելով: Տղաքը պիտի խաղային:
Ումանք «քոնա» ուզեցին, ուրիշներ «գալիպարան»: Երբ Գաբոն Բեկցի մամուն
Դավիթին հետ եկավ՝

— Տղաք, — ըսավ, — ո՞վ մեզի հետ կուզա լեռան տանձ ուտելու՝ Գինանա լեռը:
Շատ հեռու չէ՝ հոսկե մինչև Ապուզտայի մեր գեղին արտերը : Այնչափ անգամ չէ:
Հոսկե մինչև վերի Չայլուն կա ու չկա: Իրիկուն չեղած՝ նորեն մեր տուներն ենք: Տասը,
տասներկու ծառ կա: Գինանցոց տղաքը մեզի ըսին: Տանձերը թափեր են ծառերուն
տակը: Ոչ ուտող կա, ոչ ալ՝ ժողվող: Անանկ հասունցեր են, որ վրան ելլել, թոթվելու
գործ չկա: Իրենք իրենցմե փրափիրթ կթափին, վար կիյնան: Մեղր եղեր են, մեղր: Տեր
չունին, ըսին: Կերեք, որչափ կրնաք: Կուզեք ժողվեցեք, տուն տարեք: Մարդ բան
չըսեր:

— Դուք գաք, չգաք, մենք երկուքս կերթանք, — ավելցուցին:

— Ես կուզամ, — ըսավ Եսիկանց Թորոսը, Գաբոյին խոսածներեն ոգևորվելով:

— Ես ալ կուզամ, — ըսավ Ավետենց Մկրբը:

— Մենք ալ կուզանք, — գոչեցին, տասնըերեք տղա էին, ամենքը միասին՝ ոտքի
ելլելով: Մեջերնին երկուքը պզտիկ էին, մյուսներուն պես կապույտ կտավե շալվար ու
սալթա չեին հազեր դեռ, իրենց մայրերուն կարած էնթարիով էին:

— Մենք ալ ձեր հետ կուզանք, — ըսին, — մենք չենք հոգնիր, ձենե աղեկ
կրալենք:

Գաբոն չուզեց, որ տուներուն լուր տային: Թող չգիտնային: Կըլլա, որ
կարգիլէին, չեին ձգեր երթալու: Ինք ու Դավիթը առջևեն, խումբով Վերի Լեղաղբյուր
իջան: Մարդ չկար: Արտքաղեն հետո ո՞վ կըլլար հոն: Ճակատի մեծ ու երկու կողմի

երկու փողքակներեն ջուրերը ի՞նչ ուժգնությամբ կնետվեին երեք կարգի երեքական գուտերուն մեջ, անոնցմե ալ՝ ձորը, հոնկե ալ՝ ո՞ւր կերթային, ո՞վ զիտեր:

— Տղաք, մինչև Գինանա՝ ճամբան ջուր չկա, զիտցած եռեք, — ըսին Գարոն ու Դավիթը:

Թող չըլլար: Տղաքը մոտեցան փողքակներուն, խմեցին ու խմեցին, լեղիմեղի, ինչ կուզեր ըլլար. քիթերնեն, բերաններնեն դուրս հորդելու աստիճան՝ փորերնին ջուրով լեցվեցան, տապու դարձան: Վրագլուխնին ալ ջուրերեն ցայտքերեն խխում եղան, բայց ամառ էր դեռ, կշորնային:

Շատերը մեկ անգամ խմելեն չգոհացան, քիչ եկավ, նորեն ծարավցան, նորեն խմեցին, հակառակ Ավետենց Մկրտչին ազդարարության.

— Տղաք, մի խմեք, լեղի ջուր է, ներսիդինիդ կփրփրի, բերանիդ կչորնա:

Գարոն ու Դավիթն ալ խմեցին: Ո՞վ մտիկ կըներ Մկրտչին ըսածներուն:

Դաշտ ելան: Հուլիսի պես տաք կըլլար: Քաղված արտերուն խոզաններուն դեղինը արևին ճառագայթներեն՝ խտդտացուց ամենուն աչքերը: Ճը ոռ... ճը ոռ... ճը ոռ... կկանչեին ծղրիթները դաշտին բյուրավոր անկյուններեն ու ամեն քայլափոխի՝ մարախներ կցատկտեին խումբին առջևեն:

— Ծօ՛...— պոռաց Արսենը:

— Ի՞նչ կա,— հարցուցին տղաքը:

— Սունկ մը, սունկ մը բուսեր է արտին թումբը, չե՞ք տեսներ:

— Ան սունկ չէ, քար է, ճերմակ քար մըն է,— ըսին տղաքը, չհավատալով:— Ամառ սունկ կըլլա՝, սունկը գարունը կըլլա:

— Չքալե՞ք, ծո՛,— պոռաց Գարոն՝ հրամայող շեշտով մը, երբ ետին դարձավ ու տեսավ, որ տղաքը կեցեր են ու կվիճաբանին:

Մինչև լեռանը փեշը վագեց Արսենը: Չեր սխալած: Իրավցնե՝ սունկ մըն էր, նուրբ ու երկայն ցողունով մը, որ, տեղը ջրուտ ըլլալուն՝ ինչպէ ս թե բուսեր էր, զգուշությունով մը, որ չփշրվի, բերավ ու ամենուն ցուցուց:

Ճամբան շատ փոշոտ ըլլալուն՝ տղաքը խոզաններուն մեջեն քալեցին, ցրված խումբերով: Տեր Գենարին արտին մեջ Օհանը աղվոր բիր մը գտավ: Ամենքն ալ ուզեցին, որ իրենց տար, բայց Օհանը կուտա՞ր, ինք պիտի գործածեր: Արտի մը մեջ ալ՝ այդ առտու իրենցմե առաջ նստող ու ճաշողներ եղեր էին, նետված ստիի կեղևներեն ու մնացորդներեն կհասկցվեր: Քովն ալ ծխախոտի տուփ մը մոռցեր էին,

մինչև կափարիչը ծխախտով լեցուն, սիկարի թուղթով, աբեթով, կայծքարով, հրահանով միասին: Առաջին տեսնողը Նշանը եղավ: «Պապուս կտանիմ» ըսավ ու առավ: Բայց տղաքը կթողէ՝ ին իրեն, որ պապուն տաներ: Ամենքը հավաքվեցան, տուփը քաշեցին ձեռքեն ու բացին: Ճիկառաներ փաթթեցին, հրահանով վառեցին ու ծխելով քալեցին: Ու պարպած տուփը Նշանին տվին, որ ինչ կուզեր՝ ըներ:

— Տղաք,— ըսավ Ավետենց Մկրտչը,— կուզե՝ ք, որ երթանք ու ծառերուն տակը տանձ չգտնենք:

— Հայտի պե,— ըսին ամեն կողմեն, ու ատանկ ենթադրության վրա խորհիլ անգամ չուզեցին:

Անկյունադարձե մը Գինանա լեռը ու տանձերու ծառերը երևան: Ոգևորվեցան: Ինչպէ ս պիտի ուտեին, անգամ մը որ՝ հոն հասնեին: Բայց դեռ շատ քալել պետք էր: Իսկ ամենքը ծարավցած էին, կայրեր ներսիդինին, կպապակեին: Լեղաղբյուրի ջուրը ըրավ այս ծարավությունը: Ի նշ անխելքություն ըրին ու խմեցին:

— Տղաք, ես ծարավութենես կմեռնիմ,— ըսավ Սլոյենց Վարդանը,— ալ չեմ կրնար քալել: Ես Քարսաղբյուր պիտի իջնամ ու կուշտ ու կուռ մը խմեմ, ինչքան հեռու կուզե ըլլա: Ես կերթամ:

— Շատ կուշանանք,— ըսավ Գարոն:

— Թող ուշանանք,— պատասխանեց,— տասնըհինգ հոգի ենք, ինչե՞ն պիտի վախնանք: Հումհում կուտենք մեզի ծուռ նայողը:

Ո՞վ, որը՝ ծարավ չէր տղոցմեն: Ամենքը, քալելով չէ՝ վազելով, Քարսաղբյուրի ձորը իջան, որ մութ, կապարազույն ժայռերու մեջեն երկու տեղե, երկու ակերե կրիսեր: Ափով պետք էր որ խմեին: Ափով ինչքա՞ն ջուր կխմվեր, որ գոհացներ իրենց ծարավը: Պառկեցան իրենց փորերուն վրա՝ ակերուն բոլորտիքը, ու խմեցին ու խմեցին, ու խորունկ օ խ մը քաշելով, խմողը լեռը ելավ, ծառերուն ուղղությունով:

Մկրտչին խորհրդածությունը ճիշտ ելավ: Տանձ չկար՝ ոչ գետինը, ոչ ծառերուն վրա: Թող չորցած մը, փտած մը ըլլար, թող կեսը կերպած մը, նետված մը ըլլար, թող քարտանձ մը ըլլար: Այծերուն աղբեն, սև սպլտուրներեն զատ՝ բան չէր երևանար ծառերուն տակը:

— Ասո՞նց համար մեզ մինչև հոս բերիր, Ղևանին տղան: Ասո՞նք են տանձերդ,— ըսին տղաքը Գարոյին: Ու հայհոյեցին:

— Գինանցոց ջան ձագերը մեզ խաբեցին, որքան հայհոյեք՝ իրավունք ունիք,— ըսավ Գարոն:

Իրիկուն եղավ: Արևը մարեցավ Ուրանիկի լեռներուն ետին:

— Հիմա ինտո՞ր զյուղ պիտի դառնանք, ատոր վրա խորհինք,— ըսին ամենքը:

— Շուտ հասնելու համար՝ լեռներեն, աձեք, չե՞նք կրնար երթալ,— ըսին քանի մը հոգի:

— Ճամբա չես զիտեր՝ ինտո՞ր կերթաս,— պատասխանեցին:

— Հիմա զյուղը, մեր տուները ի՞նչ կըլլան մեզի համար՝ որ ուշացանք,— ըսին:

Զորիի մը վրա նստած ջորկոր մը, կզկալ մը, այսինքն՝ մորուսավոր մը, եկավ, ու տղոց բազմության վրա նայելով, զարմացավ:

— Ալլա՛հ, ալլա՛հ, այսչափ տղաք, զիշերով, այս լեռան գլուխը, այս ծառերուն տակ եկեր եք, ի՞նչ կընեք, չոճուխլար, դուք ո լրտեղացի եք:

— Մենք թեղուտցի ենք,— ըսին և՝ ինչու ու ինչպէս հնու գալերնին պատմեցին:

Ղաֆուոցի էր, դզլպաշ էր կզկալը:

— Չեր մեջ իեշ խելք ունեցող մը չկա՞—, ըսավ,— Ղաֆուոցին, Թափուտին, Գինանային, երեք զյուղերուն չոպանները ամեն օր հնու են, տանձ կյողող ևն աս ծառերուն վրա: Եվ թե՝ լեռնեն մի երթաք, ճամբա չեք զիտեր, զիշերով ինտո՞ր կերթաք: Մեղք եք, մեկ տեղերնիդ՝ կիյնաք, կկոտրեք, դուք նորեն ձեր ճամբովը զացեք:

Տղաքը նորեն իրենց եկած ճամբան իշան, քալեցին ու քալեցին, և ի՞նչ արագարագ, զյուղ հասնելու համար: Ամենեն պզտիկները անզամ՝ Եսիկանց մեկալ տանը Ճանոն, Եշտենց Աղան, Պետենց Պեկոն, տասը տարեկան ալ չկային, ոտքերնին ալ կոշիկ չկար, չչլներովը էին, չչլները ձեռքերնին առին, բուձերով՝ այսինքն զուլպաներով, մեծերեն աղեկ կքալեին:

Սուրբ Օհանին առջևն որ եկան, Թոսունենց Կողիկը դիմացնին ելավ, որ իր զյուղը կդառնար:

— Ծո՛, տղաք, ո՞ւր էիք մինչև հիմա, ի՞նչ եղաք, ո՞ւր մնացիք,— ըսավ,— զեղը ձեզի համար ելավ, ելավ ու իշավ, տակնուվրա եղավ: Գեղով ամենքը ոտքի վրա են, ոչ նստան, ոչ ճաշեցին. կնիկները «աս տղոցը զիսուն փորձանք մը եկավ անպատճառ» ըսելով կծեծկվին, կուլան ու կողբան ձեզի համար: Երկու Արմտանները, Ապուշտան, Զնզնուտը, երկու Աղըլտերեները, երկու Չայլուները, Ուրանիկը, Ղարապապան, Ղարակապանը, ալ աշխարհքը տեղ չձգեցին ու մարդ

դրկեցին, ուր գացին՝ «հնս չկան, չզիտենք» ըսին: Մեկերնիդ առաջ վազեցեք, լուր տարեք զյուղը, ըսեք, թէ՝ հնս ենք, կուզանք ամենքս ալ:

— Տղաք, փառավոր ծեծ մը պիտի ուտենք զեղեն այս զիշեր,— ըսավ Ավետենց Մկրտչը:— Ամենեն փառավորը քուկդ է, Ղևճին տղան:

Գարոն գլուխը փարտեց.

— Հը՛, հը՛, — ըրավ:

— Հը՛ իը՛՝ ի՞նչ է, — շարունակեց Մկրտչը, — Կեռո Գևորգը, Հայթան, Շերպեթենց Մքայելը՝ դուք ժողովուրդը դոները ձգեցիք, ըսեն ու ծեծեն նե՛՝ ի՞նչ պիտի ընես, ի՞նչ պիտի ըսես, ծո՛:

— Մեկ մը որ՝ չքալեցին, պիտի ըսեմ: Լեղաղբյուրը կեցան, ջուր խմեցին, «նորեն ծարավցանք» ըսին, ելան մինչև Քարսաղբյուրը գացին, ջուր խմեցին, ճամբտին կեցան: Անկե ետքը՝ թող չզային, պիտի ըսեմ, զոռո՞վ առի, հետս տարի: Ես ու Դավիթը պիտի երթայիք: Իրենք ալ ոտքի ելան, հետերնիս եկան: Մենք ի՞նչ ընենք: Ես հնս հանցանք ունի՞մ, պիտի ըսեմ:

— Լեռան տանձին տեղ ծեծը ուտենք տե, քեզի ալ՝ «մեղերնին մեծը դուն էիր, աս պզտիկներուն երկու տարիքն ունիս» ըսեն, դուն նորեն՝ լեզվիդ տուր: